ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

17 սեպտեմբերի 2026 թվականի N 1348 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 22-Ի N 613-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի մայիսի 22-ի «Շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող պարտադիր միջոցառումների ցանկը հաստատելու մասին» N 613-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«1. Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն:

1.1. ծրագրի նկարագիր. դասընթացը նպատակ ունի բուժաշխատողներին սովորեցնելու արտակարգ իրավիճակներում տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերել, արագ արձագանքել անհետաձգելի իրավիճակների ժամանակ և կյանքի համար վտանգավոր իրավիճակներում տուժածներին ցուցաբերել առաջին բուժօգնություն՝ մինչև մասնագիտական թիմերի ժամանումը, կազմակերպել թիմային աշխատանք:

1.2. ուսուցանվող գիտելիքների շրջանակ.

1) առաջին բուժօգնության հիմունքներ՝ ներածական մաս, արտակարգ իրավիճակների պայմաններում առաջին բուժօգնության կազմակերպում, հիմնական սկզբունքների ներկայացում. Հիվանդ կամ վնասվածք ունեցող անձի կառուցվածքային առաջին գնահատում (ABCDE) և կառավարում, անգիտակից վիճակների (կողքի ապահովության դիրքի կամ վերականգնողական դիրքի ցուցադրում), (1 ժամ տեսական և 0,5 ժամ գործնական).

2) սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ)՝ մեծահասակների, 0-1 տարեկան և 1 տարեկանից բարձր երեխաների ՍԹՎ-ի հիմնական բաղադրիչները և տարբերությունները, սրտի անուղղակի մերսում, ցուցում, կատարման տեխնիկա, ՍԹՎ-ի ավարտը, արդյունավետության և անարդյունավետության գնահատում, արտահիվանդանոցային ՍԹՎ-ի հիմնական բաղադրիչները և տարբերությունները: Բազմափրկարար սիրտ-թոքային վերակենդանացում (ՍԹՎ) իրականացնելիս թիմային աշխատանքի կազմակերպում և արդյունավետ թիմի անդամի դրսևորում (1,5 ժամ տեսական և 1,5 ժամ գործնական).

3) ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորների օգտագործում՝ ավտոմատ արտաքին դեֆիբրիլյատորների կարևորությունը, ճիշտ և վաղ կիրառման կարևորությունը և հմտությունները (0,5 ժամ տեսական և 0,5 ժամ գործնական).

4) շնչառություն, շնչուղիների անցանելիություն, օտար մարմնով շնչուղիների խցանման վերացում տարբեր տարիքային խմբերում՝ շնչուղիների անցանելիություն, շնչառություն և արյան շրջանառություն (ABC), օտար մարմնի հեռացում շնչուղիներից, արհեստական շնչառություն, ցուցումը, մանեկենի վրա արհեստական շնչառության տեխնիկայի ցուցադրում (բերան-բերան, բերան-քիթ, Ամբու պարկ), (1 ժամ տեսական և 1 ժամ գործնական).

5) առաջին բուժօգնություն վնասվածքի հետ կապված անհետաձգելի վիճակների դեպքում՝ վնասվածքներ (սալջարդ, վերքեր, անդամահատում, օտար մարմնի առկայություն), կյանքին սպառնացող արյունահոսություններ, այրվածքներ, կոտրվածքներ, ինչպես նաև շոկային իրավիճակների վաղ հայտնաբերում և կառավարում (1,5 ժամ տեսական և 0,5 ժամ գործնական).

6) առաջին բուժօգնություն անաֆիլակտիկ շոկի, ջղաձգումների (էպիլեպտիկ նոպա), կաթվածի, կրծքավանդակի ցավի, հիպոգլիկեմիայի, բրոնխիալ ասթմայի նոպայի, թունավորումների, կենդանիների կծածների և խայթոցների ժամանակ (1 ժամ տեսական և 0,5 ժամ գործնական).

7) առաջին բուժօգնություն ընդհանուր սառեցման (հիպոթերմիա), ցրտահարման, արևահարման, ջերմային հարվածի (հիպերթերմիա), ջերմային հյուծման ժամանակ (0,5 ժամ տեսական և 0,5 ժամ գործնական):

Տևողությունը՝ 12 ժամ (12 ՇՄՋ կրեդիտ, որից 7-ը՝ տեսական, իսկ 5-ը՝ գործնական կրեդիտ):

Թիրախային լսարան՝ ավագ և միջին բուժաշխատողներ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի հոկտեմբերի 1-ից:

3. Սույն որոշման ուժի մեջ մտնելուց հետո «Արտակարգ իրավիճակներում առաջին բուժօգնություն» շարունակական մասնագիտական զարգացումն ապահովող պարտադիր միջոցառման կազմակերպիչները դասընթացները պետք է կազմակերպեն սույն որոշման 1-ին կետով սահմանված պահանջներին համապատասխան՝ միջոցառման գործնական բաղադրիչը բացառապես առկա ձևաչափով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

17.09.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ